ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 50

հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքը (Վահան բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ

(Ճամբարակ համայնքի (Վահան բնակավայրի) գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝

ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքը (Վահան բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Գեղարքունիք-8 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝

ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի (Վահան բնակավայրի) Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
05-081-0143-0001 կադաստրային ծածկագրից առանձնացված 5.552 հա մակերեսով և 05-081-0158-0001 կադաստրային ծածկագրից առանձնացված 2.8366 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայր	05-081-0143-0001 կադաստրային ծածկագրից առանձնացված 5.552 հա մակերեսով և 05-081-0158-0001 կադաստրային ծածկագրից առանձնացված 2.8366 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Անհրաժեշտ է հետագա գործառույթներն իրականացնել հաշվի առնելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գրությամբ ներկայացված պահանջը (կցվում է):

4. Ճամբարակ համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Վահան բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի (Վահան բնակավայրի) հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝	
	Ե.Վարդանյան
Հանձնաժողովի քարտուղար՝ ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի աշխատանքային պարտականությունները կատարող՝	
	Լ.Սարգսյան

Երևան, «31» «հունվարի» 2025 թ.